



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

31 օգոստոսի 2011թ. թիվ 423

Զ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄՆԱՑԱԾ ՄԱՍԸ ԵՎ
ԶՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163, 176 հոդվածների, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. դեկտեմբերի 16-ի թիվ 1652-Ն որոշումը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի մարտի 15-ի թիվ 93 կարգադրությունը և Զ.Մարգարյանի դիմումը՝

Կ ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Մ ԵՄ.

1. «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրեն Զեմֆիրա Մարգարյանին տրամադրել 2011 թվականի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մնացած մասը ա/թ սեպտեմբերի 13-ից մինչև 17-ը ներառյալ՝ 5 աշխատանքային օր և չվճարվող արձակուրդ ա/թ սեպտեմբերի 19-ից մինչև 23-ը ներառյալ՝ 5 օր:

2. Զ.Մարգարյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի ավագ մանկաբույժ Կարինե Բաղդասարյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2011թ. օգոստոսի 31
ք.Վանաձոր